

ԿՈՌՈՒՊՑԻԱՅԻ ՄԵՋ ՆԵՐԳՐԱՎՎԵԼԸ ՈՇՆՉԱՑՆՈՒՄ Է ՄԵՐ ՄԱՍՆԱԳԻՏՈՒԹՅՈՒՆԸ. ԱՐԱ ԶՈՂՐԱԲՅԱՆ

24.05.2019 18:10



Հայաստանի Հանրապետության փաստաբանների պալատի խորհրդի հանդիսավոր նիստի ժամանակ անդամների միաձայն քվեարկության արդյունքում ՀՀ փաստաբանական դպրոցի 72 ունկնդիրների հանձնվեցին փաստաբանի մասնագիտական գործունեության արտոնագրեր:

Ողջույնի խոսքում փաստաբանների պալատի նախագահ Արա Զոհրաբյանը շնորհավորելով ունկնդիրներին՝ խորհուրդ տվեց իրենց մասնագիտական գործունեության ընթացքում հավատարիմ մնալ փաստաբանի երդմանը և անդավաճան՝ մասնագիտությանը: **«Այսօր մեզ համար հիշարժան օր է: Մեր համայնքը քիչ անց համալրվելու է 72 փաստաբաններով: Անձիք, ովքեր բարձր մրցակցության պայմաններում ընդունվել են փաստաբանական դպրոց, հաջողությամբ ավարտել ու հանձնել են որակավորման քննությունները և արժանացել են փաստաբանի պատվաբեր կոչմանը: Սկսած ուսման հենց սկզբից քարոզում ենք հեռու մնալ կոռուպցիայից: Մեր համայնք մոտք էք գործում ձեր գիտելիքներով, որը ապացույցն է այն բանի, որ Փաստաբանական դպրոցում ու Փաստաբանների պալատում կոռուպցիա չկա: Կոռուպցիայի մեջ ներգրավվելը ոչնչացնում է մեր մասնագիտությունը»**, - նշել է Արա Զոհրաբյանը:

Պալատի նախագահը խոսելով փաստաբանների մասնագիտական գործունեության դժվար, սակայն հետաքրքիր աշխատանքի մասին՝ նշել է, որ մասնագիտական գործունեության արտոնագիր ստացող փաստաբանները կբախվեն անօրինականությունների, բռնի ուժի, կոռուպցիայի ու կամայականությունների հետ, սակայն խորհուրդ է տվել պայքարել այդ բացասական երևույթների դեմ: Եզրափակելով ելույթը՝ Արա Զոհրաբյանը շնորհակալություն է հայտնել որակավորման հանձնաժողովի անդամներին, փաստաբանական դպրոցի աշխատակազմին ու դասախոսական կազմին:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ, փաստաբանական դպրոցի տնօրեն Սիմոն Բաբայանը նույնպես շնորհավորել է շրջանավարտներին և նշել, որ. **«Փաստաբանական դպրոցը միշտ ձեռնարկում է համապատասխան միջոցներ, որպեսզի ունկնդիրների ուսուցումը**

հավուր պատշաճի իրականացվի, և այդ ժամանակահատվածում փորձում ենք անել ամեն ինչ, որպեսզի դուք ստանաք անհրաժեշտ հմտությունները և գիտելիքները ձեր մասնագիտական գործունեությունն իրականացնելու համար»:

ՀՀ փաստաբանների պալատի խորհրդի անդամ Կարեն Մեծլումյանը նույնպես ողջունել է ունկնդիրներին և իր խոսքում ընդգծել իրավապաշտպան բնույթի կարևորության մասին: Նա մասնավորապես ասել է,-**«Գիտեք, որ ապրում ենք մի ժամանակաշրջան, երբ կարող են կամա թե ակամա խախտվել մարդկանց իրավունքներ, որտեղ ձեր իրավապաշտպան աջակցությունը կարող է պետք գալ մեր քաղաքացիներին: Գտնում եմ, որ մեր մասնագիտությունը լավագույն մասնագիտություններից է, որովհետև իրավապաշտպանի գործը շնորհակալ գործունեություն է»:**

Փաստաբանների պալատի խորհրդի անդամ Սեդրակ Ասատրյանը միացավ շնորհավորանքներին և խորհուրդ տվեց շրջանավարտներին լինել բարեխիղճ, պրոֆեսիոնալ և զուսպ:

Փաստաբանների պալատի խորհրդի անդամ Գայանե Դեմիրջյանն իր խոսքում ասաց,- **«Մեր հասարակությունն առավել քան երբևէ ունի խելացի, չերկնչող, սկզբունքային մասնագետների և հատկապես փաստաբանների կարիք: Մաղթում եմ, որ ձեր գործունեությամբ հասնեք իրավունքի գերակայության ամրապնդմանը մեր երկրում: Ինչպես ասում են լավ փաստաբանը գիտի բոլոր նախադեպերը, իսկ լավագույն փաստաբանն ինքն է ստեղծում նախադեպեր: Մաղթում եմ, որ լրացնեք լավագույն փաստաբանների շարքերը»:**

Շնորհակալական խոսքով հանդես եկան ՀՀ փաստաբանական դպրոցի շրջանավարտներից Ալեքսանդր Կոչուբանը, Նաիրա Ալավերդյանը և Գուրգեն Գրիգորյանը:

Խորհրդի հանդիսավոր մասը շարունակվել է շրջանավարտների երդմնակալության արարողությամբ: Ունկնդիրները երդվել են ազնիվ և բարեխիղճ կատարել փաստաբանի պարտականությունները, պահպանել փաստաբանական գաղտնիքը, պաշտպանել վստահորդների իրավունքները, ազատությունները և շահերը՝ ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, օրենքներով

և փաստաբանի վարքագծի կանոնագրքով:





ՀՀ ՓԱՍՏԻՔԱԼԵՐԻ ՊԱՍՏԻ ՄԱՍԻՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA




ՀՀ ՓԱՍՏԻՔԱԼԵՐԻ ՊԱՍՏԻ ՄԱՍԻՆԻ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆ
PRESS SERVICE OF CHAMBER OF ADVOCATES OF RA









Վերադառնալ \$(window).load(function(){ if(typeof \$(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt(\$(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })